ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ, ԲԱՐԵՁԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔ

Աստուծոյ ողորմութեամբ, երբ Դուք և համայն ամերիկահայ մեր ժողովուրդը կը պատրաստուիք տօնախմբել ութսունամեակը տիրախնամ թեմիդ կազմութեան, Մեր մտածումը կը սահի, կ'երթայ անցեալ տարիներու ընդմէջէն և Մեր գիտակցութեան մէջ կը պայծառանայ նուիրական յիշատակը «հայրենեաց վշտի նուագող» Հայրապետին, Ամենայն Հայոց Հայրիկին, որ իր 8 յունուար 1894 թուակիր սրբատառ կոնդակով օրհնեց համայն հայութիւնը Միացեալ Նահանգաց և հռչակեց հիմնադրումը և կազմակերպումը Ամերիկայի հայոց թեմին, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հոգևոր իշխանութեան ներքոյ:

Մեծ Հայրապետի օրհնութիւնը շնորհ և լոյս բաշխեց նորաստեղծ թեմի եկեղեցիներուն ու ժողովուրդին: Սուրբ Էջմիածնի օրհնութեան ներքոյ, տարիներու հոլովոյթով անոնք հետզհետէ զօրացան, աճեցան ու ծաղկեցան և մեր օրերուն դարձան ամենաբազմամարդ ու ամենահզօր կրօնական կազմակերպութիւնը մեր առաքելական Մայր եկեղեցւոյ, հայ ափիւռքի տարածքի վրայ:

Մենք, ձեր Հայրապետը, անհունօրէն միսիթարուած ենք ամերիկահայ թեմի մէջ գործող շէն ու պայծառ եկեղեցիներով, կրթական, մշակութային-բարեսիրական հաստատութիւններով, եկեղեցասէր երիտասարդաց ու տիկնանց կազմակերպութիւններով, որոնք Ձեր առաջնորդութեան ներքոյ և հոգևոր հովիւներու ժրաջան գործակցութեամբ, նուիրուած են իրենց սուրբ առաքելութեան, գերագոյն նպատակ ունենալով անաղարտ ու կենդանի պահել իրենց պապենական լոյս հաւատքը, հոգևոր ժառանգութիւնը, մեր մայրենի լեզուն և հայ հոգիի անմար կրակը:

Դուք, ամերիկահայ հոգևոր սպասաւորներ և հաւատացեալ զաւակներ Մեր, հաւատարիմ մնացէք սուրբ Գրիգոր Լուսաւորչի աստուածառաք տեսիլքին, հաւատարիմ մնացէք Խրիմեան Հայրիկի ուխտին, հաւատարիմ մնացէք հայոց ներկայ վերածնունդին, միշտ լաւատեսութեամբ դէպի մեր Մայր եկեղեցւոյ ու ազգի պայծառ ապագան:

Եւ ի՞նչ երջանիկ զուգադիպութեամբ, դուք նոյն այս օրերուն հպարտութեամբ կը յիշատակէք նաև տասնամեայ յոբելեանը՝ համայն ամերիկահայութեան քրիստոնէական հաւատքի խորհրդանիշը հանդիսացող՝ Նիւ Եորքի սուրբ Վարդան Մայր տաճարին, զոր Մեր իսկ ձեռքով օծելու բախտաւորութիւնը ունեցանք Մենք, տասը տարիներ առաջ: Սուրբ Վարդան տաճարը, Միացեալ Նահանգաց աստուածասէր հողին վրայ բարձրացող փառայեղ վկայութիւնն է հայկական քրիստոնէական լոյս հաւատքին և հայ դասական ճարտարապետութեան, որով, այո՛, արդարօրէն կրնանք հպարտ ըլլալ: Մեր ամենաջերմ պատգամն է որ սուրբ պահէք անունը ձեր հայ քրիստոնեայի, անունը Հայաստանեայց առաքելական մեր Մայր եկեղեցւոյ և լոյսը՝ Աստուծոյ շունչով շաղախուած հայ մշակոյթին:

Թող Աստուած հարցն մերոց, իր սուրբ Հոգիով զօրացնէ Ձեզ, ձեր հոգևոր դասը և համայն Մեր հաւատացեալ զաւակները յԱմերիկա և լուսաւորէ ձեր բոլորիդ առաքելութեան ճանապարհը, ի փառս մեր Տիրոջ և Փրկչի Յիսուսի Քրիստոսի և Անոր երկրպագու հայ բարեպաշտ ժողովուրդի:

«Արդ, հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով եկեղեցի» (Ա Կորնթ. ԺԶ 14). ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 31 մարտի
1978 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԷ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄՐ. 902